12րդ յոդուածը շօշափում էր Բրեստ-Լիտովսկի դաշնագրից բխող իրաւունքները:

13րդ յոդուածի համաձայն ներկայ պայմանագրի սահմաններից դուրս եղող և գրաւած հողերը պէտք է անմիջապէս պարպէին:

Ըստ յաւելուածների, Թիւրքերն իրաւունք էին ստանում, պատերազմի դէպքում, Հայաստանի վրայով զօրք փոխադրել, Թիֆլիս-Երեւան-Ջուլֆա երկաթուղով ապահովւում էր ազատ երթեւեկութիւնը Թիւրքերի և հայերի համար, հայ գերի զինուորները իրաւունք պիտի ունենային վերադառնալ Հայաստան, Կարսի և Բաթումի շրջանների հայ գաղթականները կարող էին մի ամսւայ ընթացքում վերադառնալ իրենց տեղերը, միւս վայրերի գաղթականները՝ դաշնագիրը ստորագրելուց անմիջապէս յետոյ, իսկ Թիւրքահայերի վերադարձի խնդրի լուծումը յետաձգւում էր ընդհանուր պատերազմից յետոյ:

Այսպիսով, ըստ Բաթումի դաշնագրի, Հայաստանը դառնում էր անկախ պետութիւն: Ահ ու դողով մտնում էր նա ինքնիշխան ազգերի համակեցութեան մէջ, իբրև ազատ անձնաւորութիւն միջազգային իրաւունքի: Նրա հողի տարածութիւնը, մօտաւորապէս, 12,000 քառակուսի կիլոմետր էր, բնակչութեան թիւը, գաղթականներով միասին՝ մօտ մէկ միլիոն: Եւ... մայրաքաղաքից եօթը կիլոմետր հեռու՝ նայում էին Թիւրքական թնդանօթները...